# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

## Ավարտական հետազոտական աշխատանք

## Թեմա- ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

**Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն**

**Վերապատրաստվող՝ Լուսինե Վասիլյան**

**Ուսումնական հաստատություն՝ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, հ8 հիմնական դպրոց**

**Վերապատրաստող՝ Հասմիկ Պողոսյան**

**2023-2024ուստարի**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ ---------- 2

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ----------4

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ----------11

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------21

5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----------22

## ՆԱԽԱԲԱՆ

Աշակերտին սովորեցրու աշխատել, նրան ստիպիր ոչ միայն սիրել աշխատանքը, այլև այնքան նրան հարազատանալ, որպեսզի այն դառնա նրա երկրորդ բնավորությունը, սովորեցրու նրան այն բանին, որ նրա համար անհրաժեշտ լինի այլ կերպ, քան սեփական ուժերով որևէ բան յուրացնելը, ինքնուրույնաբար մտածի, որոնի, իրեն դրսևորի, զարգացնի իր ներքին ուժերը, իրենից մշակի անսասան մարդու:

Ադոլֆ Դիստերվեգ

Մերօրյա կրթական համակարգում ձևավորված նոր արժեքները, չափորոշիչները, մեթոդական նոր մոտեցումները մանկավարժական գործունեության մեջ արդյունավետ ուսուցման ուղիներ են մատնանշում:

Հանրակրթական այսօրվա պահանջներից մեկը աշխարհաճանաչողության, մտածողության ձևերի և մեթոդների յուրացումն ապահովելն է, սովորել սովորեցնելը, որպեսզի սովորողը ուսումնական գործունեության ընթացքում ձեռք բերի հիմնարար գիտելիքներ, հմտություններ, կարողունակություններ, ձևավորի արժեքներ և ունենա դիրքորոշում: Իսկ այսպիսի անհատ ձևավորելու համար պետք է ուսուցիչը ուսումնառության գործընթացում կիրառի այնպիսի արդյունավետ մեթոդներ, որոնք կօգնեն նախաձեռնել, արագ կողմնորոշվել, գործունեությունը պլանավորել, հաղորդակցվել, փաստերը համադրել, որոշումներ կայացնել, որոշման համար պատասխանատվություն կրել, անդրադարձ կատարել, արժևորել, գնահատել. . .

Այս բոլոր խնդիրների լուծման բանալին, գործիքը, ըստ իս, կարող է լինել ուսուցման նախագծային մեթոդը, որը հնարավորություն է տալիս առավելագույնս բացահայտել սովորողի ստեղծագործական ներուժը, ինքնադրսևորվել թե՛ անհատապես, թե՛ խմբում՝ փորձելով ուժերը:

Մեր ժամանակաշրջանում դժվար է աշակերտներին ստիպել կարդալ հայ գրականություն, հատկապես՝ պոեզիա: Այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտ է օգտագործել ցանկացած միջոց, որը կնպաստի հայկական պոեզիայի ճանաչմանը, կընդլայնի հետաքրքրությունը «Գրականություն» առարկայի հանդեպ:

Որպես հետազոտության նյութ՝ ընտրել եմ Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության շուրջ նախագծային աշխատանքի կազմակերպումն ու իրականացումը: Նպատակս է՝ խթանել հետաքրքրասիրություն, ընթերցասիրություն, հայրենասիրություն, վերլուծական, քննադատական մտածողություն, ստեղծագործականություն, զարգացնել սովորել սովորելու, մշակութային, լեզվական կարողունակություններ, ստեղծել միջառարկայական կապեր:

Նախագծային աշխատանքի թեման այսօր էլ արդիական է, քանզի Հայաստանի ոգեղեն պատմության գեղարվեստական մարմնացումն է, հավերժության երգը, պատգամը, ի մի բերող ուժը, որ հայ ժողովրդի պատմության արշալույսից սերունդների մաքառումների և արյան գնով շնորհված է մեզ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուսուցման գործընթացում անհրաժեշտաբար առաջ են գալիս ուսումնական գործունեության նոր ձևեր, մեթոդներ, տեխնոլոգիաներ, որոնք զարգացնում են սովորողների լեզվամտածողությունը, խոսքային կարողությունը, ձևավորում են իմացական կայուն կառույցներ, որոնք ժամանակի ընթացքում դառնում են ինքնակառավարվող:

Ուսուցման ժամանակակից նմանօրինակ տեխնոլոգիաներից է նախագծային ուսուցումը, որը՝ որպես հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մի շարք մեթոդների և սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն, իրականացվում է տրված առաջադրանքը կատարելու նպատակով: Նշված տեխնոլոգիայի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն, որպեսզի գործնական առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերեն գիտելիքներ: Նախագծային աշխատանքի հիմքում ընկած են սովորողի ճանաչողական, համագործակցային, հետազոտական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, փաստերը համադրելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Նախագծային աշխատանքի կիրառումը հնարավորություն է տալիս ձեռք բերելու գիտելիքներ, ձևավորելու կարողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ ծրագրելու և ինքնուրույն իրականացնելու միջոցով: Այս դեպքում մանկավարժը ստանձնում է մշակողի,համակարգողի, փորձագետի և խորհրդատուի դեր: Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի արդյունքը տեսանելի և հրապարակված աշխատանքն է: Բովանդակային գիտելիքը և հասկացությունների ըմբռնումը ինքնին բավարար չեն մերօրյա աշխարհում: Սովորողները պետք է կարողանան քննադատաբար մտածել, խնդիրներ լուծել, իրենց դրսևորել համագործակցային աշխատանքում: Կրթական բարեփոխումները, զարգացման ուղղությունները պահանջում են ուսումնական գործընթացի կազմակերպման նոր ձևեր, տեխնոլոգիաներ, որոնցից մեկը նախագծային ուսուցումն է:

Նախագծային ուսուցումը դասավանդող(ներ)ի ու սովորող(ներ)ի համատեղ կրթական գործունեությունն է, որը նպատակաուղղված է որևէ հիմնախնդրի տեսական կամ գործնական

լուծմանը: Այն ակտիվ և հարցումների վրա հիմնված ուսուցում է, որը հակադրվում է ուսումնական նյութը սոսկ անգիր անելու գործընթացին: Սովորողների նախագծային գործունեությունը նրանց մտածողության զարգացման լավագույն միջոցներից մեկն է, որը համապատասխանում է կրթության արդի խնդիրներին և կարող է դառնալ կրթության բովանդակության բարեփոխումների հիմնական բաղադրիչներից մեկը:

Նախագծային ուսուցման հիմնական նպատակներն են՝

- նպաստել սովորողի ինքնագնահատականի բարձրացմանը՝ հնարավորություն ստեղծելով, որ յուրաքանչյուրն իրեն համարի ընդունակ,
- սովորողների մոտ ձևավորել համագործակցային և մյուսներին գնահատելու կարողություններ,
- զարգացնել սովորողի քննադատական մտածողությունը,
- նպաստել առաջադրված խնդիրը լուծելու ուղիների որոնման հմտության ձևավորմանը,
- զարգացնել սովորողների հետազոտական կարողությունները (բացահայտել հիմնախնդիրը, հավաքել անհրաժեշտ տեղեկություններ, դիտարկել գործընթացները, ընդհանրացնել և այլն) և վերլուծական մտածողությունը:

Կրթությունը կոչված է ձևավորելու և զարգացնելու սովորողների նախագծային ստեղծագործական մտածողությունը: Լավագույն, սեփական լուծումը գտնելու ձգտումն ուսուցման հիմնական շարժառիթն է նախագծային կրթության մեջ:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիան սկսվել է կիրառվել XVIII դարում Եվրոպայի ճարտարապետական դպրոցներում: Հետագայում՝ XX դարասկզբին, Ջոն Դյուի կողմից պրագմատիկ մանկավարժության հիման վրա մշակվել է նախագծերի մեթոդը, որի հիմնական գաղափարը «սովորելով անելն էր»: Նախագծային ուսուցման հիմքում դրվեց Դյուի այն համոզմունքը, որ «ուսուցիչը դպրոցում է ոչ թե երեխային որոշակի գաղափարներ պարտադրելու կամ նրա մոտ որոշակի սովորություններ ձևավորելու համար, այլ այնտեղ է որպես համայնքի անդամ՝ ընտրելու այն ազդեցությունները, որոնք պետք է ազդեն երեխայի վրա և օգնեն նրան պատշաճորեն արձագանքել դրանց: Ուիլյամ Հերդ Կիլպատրիկը հիմնվեց իր ուսուցչի՝ Դյուիի տեսության վրա՝ նախագծային մեթոդը ներկայացնելով որպես նրա ուսուցման պրոբլեմային մեթոդի բաղադրիչ: Թոմաս Մարքեմը (2011) սահմանեց նախագծային ուսուցումը՝ որպես ուսումնական գործընթացում իմանալն ու անելը ինտեգրող տեխնոլոգիա: Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի արդյունքը տեսանելի աշխատանքն է, որը նպատակաուղղված է տարբեր կարողությունների ու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, որոնց թվում են որոնողական, հետազոտական, համագործակցային, ռեֆլեկտիվ հմտությունները, կառավարման կարողությունները:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիան ունի իրականացման հստակ փուլեր՝ հիմնահարցի ձևակերպում, հետազոտական խմբի (խմբերի) ձևավորում, աշխատանքի բաժանում, խմբերի կամ առանձին սովորողների ինքնուրույն աշխատանք, հետազոտություն, ստացված արդյունքների ընթացիկ քննարկումներ, կատարված աշխատանքների ներկայացում (նախօրոք որոշվում է ներկայացման ձևը՝ տեսանյութ, ֆոտոշարք, հոդված կամ բնագիր), սովորողների աշխատանքների գնահատում (դասավանդողի ու սովորողների կողմից) և հետագա աշխատանքի ուղիների նախանշում:

Տարբերակում են նախագծերի հետևյալ տեսակները՝

- ըստ սովորողների գործունեության՝ առարկայորեն կողմնորոշված, հետազոտական, ստեղծագործական, տեղեկատվական, դերային,
- ըստ բովանդակության՝ միջառարկայական և մոնոնախագծեր,
- ըստ հարաբերությունների բնույթի՝ ներդասարանային, միջդասարանային, տարածաշրջանային, համապետական, միջազգային,
- ըստ տևողության՝ փոքր նախագծեր(մինչև մեկ շաբաթ), կարճաժամկետ (մինչև մեկ ամիս), միջնաժամկետ (մինչև կես տարի), երկարաժամկետ (կես տարուց ավելի),
- ըստ մասնակիցների թվի՝ անհատական, խմբային, միջխմբային:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ
1
Ուսումնական նախագծերն իրականացվում են 7-12-րդ դասարաներում
2
Նախագիծն իրականացվում է ուսուցչի կողմից մշակված, համապատասխան առարկայական մեթոդմիավորման կողմից հավանության արժանացած, տնօրենի կողմից հաստատված պլանի հիման վրա
3
Նախագծերի իրականացումը վերահսկում է դպրոցի տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը
4
Նախագիծը կարող է իրականացվել մեկ առարկայի համար, ինչպես նաև մի քանի առարկաների համադրմամբ (միջառարկայական)

Նախագծային աշխատանքի կազմակերպումը պահանջում է հստակ քայլաշար.

1. նախագծային թեմայի ընտրություն,

2. թեմայի տրոհում ենթաթեմաների,

3. հետազոտական աշխատանք իրականացնող խմբերի ձևավորում,

4. տեղեկատվության հավաքագրում,

5. տեղեկատվությունների քննարկում և մշակում,

6. թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում,

7. հետազոտական հաշվետվության նախապատրաստում,

8. նախագծի պաշտպանություն,

9. արդյունքների ամփոփում:

Այսպիսով՝ նախագիծն ունի կառուցվածքային հինգ փուլ՝

1. խնդրի կամ հիմնահարցի առաջադրում,

2. նախագծում,

3. տեղեկատվության որոնում,

4. նախագծի ստեղծում,

5. նախագծի պաշտպանություն:

Նախագծային ուսուցում կազմակերպելիս հարկ է ապահովել նախագծի իրականացման փուլերի ճիշտ հերթագայությունը և նրանց հատկացվելիք ժամանակի իրատեսական համամասնությունը:

1-ին փուլ՝ խնդրի կամ հիմնահարցի առաջադրում, նպատակադրում: Մանկավարժը հանձնարարում է նախագծի թեման, սահմանում է հիմնահարցը, ձևակերպում նպատակներն ու խնդիրները: Սովորողները ընկալում են իրենց առջև դրված խնդիրը ու դրանից բխող նպատակները:

2-րդ փուլ՝ նախագծում (գործունեության տարբերակների քննարկում, իրականացման միջոցների և եղանակների ընտրություն, պարտականությունների բաշխում): Դասավանդողը կազմակերպում է նախագծի ստեղծման գործընթացը, սովորողներին բաժանում է խմբերի, բաշխում վերջիններիս դերերը խմբերում, սահմանում է նախագծային տեխնոլոգիայի կիրառման արդյունքը: Սովորողները ծրագրում են աշխատանքը, քննարկում գործունեության տարբերակները, ընտրում արդյունքների և ներկայացման ձևերն ու եղանակները:

3-րդ փուլ՝ ինքնակրթություն, տեղեկատվության որոնում: Մանկավարժը նախագծի ստեղծման նշված փուլին չի մասնակցում: Նա ընդամենը խորհրդատվություն է տրամադրում սովորողներին՝ վերահսկելով խմբերի աշխատանքը, տալիս նոր գիտելիք: Սովորողներն աշխատում են ինքնուրույն, որոնում են նախագծի ստեղծման համար անհրաժեշտ նյութեր, խորհրդակցում են միմյանց հետ:

4-րդ փուլ՝ նախագծի ստեղծում, հետազոտական գործունեություն: Մանկավարժը դիտում է սովորողների ներկայացումները, անհրաժեշտության դեպքում խորհուրդներ է տալիս նրանց՝ նախապատրաստելով նախագծի պաշտպանությանը: Սովորողները կատարում են հետազոտություններ, համադրում, վերլուծում են տեղեկությունները, ստեղծում են նախագիծը, պատրաստվում պաշտպանությանը:

5-րդ փուլ՝ արդյունքների ընդհանրացում, հանրայնացում, շտկողական գործունեություն, նախագծի հրապարակային պաշտպանություն: Մանկավարժը, դիտելով սովորողների նախագծերը, հարցեր է ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է, գնահատում նրանց կատարած աշխատանքը և խնդրի լուծման ինքնատիպությունը: Սովորողները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում են խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը, հարցեր են ուղղում միմյանց: Երբ սովորողները դեմ առ դեմ են կանգնում խնդիրներին՝ առանց պատրաստի լուծումների, նրանք բազմաթիվ հարցադրումներ են անում, և հնարավոր է, որ առավել ճշգրիտ լուծումների հանգեն իրենց քննադատական մտածողությամբ: Իրականացված նախագծի արդյունքների հրապարակային պաշտպանությունը բարձրացնում է սովորողի ինքնագնահատականը՝ նպաստելով նրա սոցիալականացմանը: Սովորողները իրականացնում են տեղեկատվության որոնում ու հավաքագրում՝ գրականության աղբյուրները, զանգվածային լրատվական միջոցները, համացանցն օգտագործելով: Դասավանդողը սովորողների ուշադրությունը բևեռում է տեղեկատվության հավաքման այնպիսի մեթոդների, ինչպիսիք են դիտարկումը, անկետավորումը, սոցիոլոգիական հարցումը, փորձի իրականացումը: Գրականությունից օգտվելու համար մանկավարժը սովորեցնում է սեղմագրման սկզբունքները: Սովորողները յուրացնում են տեղեկատվության հավաքման հմտությունը, զարգացնում են տեղեկատվությունը համեմատելու, դասակարգելու, վերլուծելու և համադրելու ընդունակությունը: Սովորողներից պահանջվում են խոր ըմբռնում ու իմաստավորում, փաստերի վերլուծություն ու եզրակացություն անելու հմտություն, ստացված տվյալների համակարգում: Ընդ որում՝ մշակվում են փորձերի, սոցիոլոգիական հարցումների և անկետավորման արդյունքները: Այս փուլում սովորողներին նախագծի ներկայացման ձևի ընտրության մեջ առավելագույն ինքնուրույնություն է ընձեռվում:

Նախագծային գործունեության վերջնական արդյունքը ներկայացվում է զեկուցման, համակարգչային ներկայացման կամ ստենդային հոդվածի ձևով: Կատարվում է արդյունքների ամփոփում և ներկայացում տարբեր ձևերով՝ ըստ նախապես որոշված ձևաչափի: Դասավանդողը լսում է և նպատակային հարցեր առաջարկում կամ ելույթ ունենում որպես սովորական մասնակից: Դասավանդողը գնահատում է սովորողների ջանքերը, նրանց ստեղծարարությունը, տեղեկությունների աղբյուրների օգտագործման որակը, աշխատանքի շարունակականության հնարավոր լինելը, նախագծի որակը:

Նախագիծը համարվում է հաջողված, եթե

- թեման ուղղված է իրական կարևոր խնդիրների լուծմանը և թիրախավորում է կոնկրետ շահառուների,
- թեման արտացոլում է սովորողների անձնական խնդիրները կամ հետաքրքրությունները,
- լուծումը պահանջում է գիտելիքներ մի քանի առարկաներից,
- սովորողները ներգրավված են հարցադրումներ կատարելու, ռեսուրսներ գտնելու, տեղեկատվությունը կիրառելու գործընթացներում,
- սովորողները որոշումներ են կայացնում նախագծի վերաբերյալ, այն մասին, թե ինչպես են նրանք աշխատում, ինչ են ստեղծում,
- սովորողները և ուսուցիչները անդրադարձ են կատարում հարցադրումների և գործողությունների արդյունավետությանը, աշխատանքի որակին, խոչընդոտներին և դրանց հաղթահարման ռազմավարություններին,
- սովորողները կիրառում են հետադարձ կապ՝ բարելավելու գործընթացի արդյունավետությունը,
- սովորողներն իրենց աշխատանքները ներկայացնում են դասարանում և դասարանից դուրս:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Նախագծային աշխատանքի ընթացքում ընդգրկվելով ուսումնառության յուրահատուկ գործունեության մեջ՝ սովորողները գիտելիքներ ոչ թե ստանում, այլ ձեռք են բերում: Կրթությունը կազմակերպվում է ոչ թե հանուն գիտելիքի, այլ գիտելիքի միջոցով ձեռք բերվելու ճանապարհով: Սովորողը փնտրում է մտածական գործունեության հնարներ, հմտանում դրանք ձեռք բերելու եղանակների և ձևերի մեջ, որով էլ զարգանում է նրա մտածողությունը, սովորել սովորելու կարողունակությունը, ինչպես նաև առարկայի նկատմամբ մեծանում է հետաքրքրությունը: Իսկ ուսուցիչը պատրաստի գիտելիքը կրողից վերածվում է իր սաների ճանաչողական գործունեության կազմակերպչի: Նա խթանում է նախագծային աշխատանքի թեմայի ընտրությունը, պլանավորում է դրա իրականացումը սկզբից մինչև ավարտը, համագործակցում է սովորողների հետ՝ աշխատանքների ժամանակացույցը կազմելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու, արդյունքներ ստանալու և հանրությանը ներկայացնելու առումներով: Նա ողջ նախագծային աշխատանքի ընթացքում իրականացնում է ուղղորդման, խրախուսման աշխատանքներ, ձևավորող և ամփոփիչ գնահատումներ:

Մասնագիտական խորը և կայուն գիտելիքները, ուսուցման գործընթացի ժամանակակից ռազմավարության մշակումը, սովորել սովորեցնելու նախապայմանն ուսուցչին օգնում են ուսուցման ընթացքում իրագործելու իր առջև դրված հեռահար նպատակները. այն է՝ ձևավորելով ու զարգացնելով աշակերտների գիտելիքները, կարողությունները և հմտությունները, արժեքային համակարգը, կարողունակությունները:

Նշված մոտեցումների ու պահանջների շրջանակում ներկայացնում եմ իմ կողմից իրականացված հետազոտական աշխատանքը: Թեմայի ընտրությունը կատարել եմ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծային աշխատանքն արդյունավետ միջոց է սովորողներին մոտիվացնելու, առարկայի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու համար: Ուսումնական նախագծային աշխատանքը կազմակերպել եմ 7-րդ բ դասարանում «Գրականություն» առարկայից՝ որպես թեմա ընտրելով Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: Նախագծային աշխատանքին մասնակցելու ցանկություն են հայտնել 9 աշակերտ(Գրիգորյան Էրիկ, Ղազարյան Ժաննա, Ոսկանյան Լիա, Նիկոլյան Հայկ, Խաչատրյան Նարե, Հովհաննիսյան Գայանե, Ղափլանյան Լուսինա, Սեդրակյան Եվա, Անտոնյան Նարեկ): Ստորև ներկայացնում եմ ուսումնական նախագծային աշխատանքի պլանավորումը:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ուսումնական նախագծի ղեկավար՝ Լուսինե Վասիլյան

| | 1. | Առարկա | Գրականություն |
|---|---|---|---|
| Նախագծի սկիզբ | | Դասարան | 7-րդ բ |
| | 2. | Նախագծի անունը (անվանումը) | «Հայաստանի հավերժության երգը» |
| | 3. | Հիմնահարցը (հիմնախնդիրը) | 1. Աշակերտների մեջ դաստիարակել մեծ սեր մեր հայրենիքի, նրա հոգևոր և մշակութային արժեքների նկատմամբ:<br>2. Արժևորել և արդիականացնել Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: |
| | 4. | Նպատակը (ները) | **1. Զարգացնել** գեղեցիկի, վեհի ընկալումը:<br>**2. Ընդլայնել** հետաքրքրությունը գրականություն առարկայի հանդեպ:<br>3. **Զևավորել** գեղարվեստական պատկերավոր մտածողություն:<br>**4. Նպաստել** ՏՀՏ-ի միջոցով ուսումնական նյութ ստեղծելու գաղափարի զարգացմանը:<br>**5. Խթանել** հայրենիքի, նրա պատմութ-յան և մշակույթի նկատմամբ սիրո դրսևորումը: |
| | 5. | Խնդիրները | **Առանցքային** – Մեր ժամանակաշրջանում դժվար է աշակերտներին ստիպել կարդալ հայ գրականություն, հատկապես պոեզիա: Այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտ է օգտագործել ցանկացած միջոց, որը կնպաստի հայկական պոեզիայի ճանաչմանը: |

| | | | |
|---|---|---|---|
| | 6. | Վերջնարդյունքը (ները) | 1. **Գնահատել և արժևորել** մեր մեծերի ստեղծագործությունները:<br>2. **Ստեղծել** ուսումնական նյութ /պրոդուկտ /, որը կհամադրի արվեստի մի քանի ճյուղ:<br>3. Գեղագիտական ճաշակ ունենալ: |
| | 7. | Աշխատանքային խմբեր | 1. Կենսագիրներ |
| | | | 2. Գրականագետներ |
| | | | 3. Մշակութաբաններ |
| | | | 4. Գեղագետներ |
| Նախագծի ընթացք | 8. | Առաջադրանքներն ըստ խմբերի | 1. Եղիշե Չարենցի կենսագրությունը, ստեղծագործության ընդհանուր պատկերը: «Ես իմ անուշ Հայաստանի » բանաստեղծությունը: Մեծերն այս բանաստեղծության մասին: |
| | | | 2. «Ես իմ անուշ Հայաստանի » բանաստեղծության կառուցվածքը, վերնագրի խորհուրդը՝ որպես անավարտ նախադասություն, բառ-բար զուգաձևության ի հայտ գալու պատմությունը , պատկերավորման միջոցները, գույները: |
| | | | 3. «Ես իմ անուշ Հայաստանի » բանաստեղծության ուղերձը՝ կապված ժամանակաշրջանի հետ, արդիա-կանացումը:Բանաստեղծության մեջ աշխարհագրական անունների և անձնանունների առկայությունը, նրանց մասին տեղեկություններ: |
| | | | 4. Ուսումնական նյութի ստեղծում, ընտրված նյութերի համադրում( «Ես իմ անուշ Հայաստանի » բանաստեղծութ-յան յուրաքանչյուր տողի նկարագարդումը բառային նկարչության միջոցով): |
| | 9. | Ժամանակացույց | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **10.** | **Գնահատում** | **Համապատասխանությունը թեմային, ամբողջականությունը, գիտական հիմնավորվածությունը, գրագիտությունը** | 1. Բովանդակությունը ամբողջովին համապատասխանում է թեմային: ***(3 միավոր)***<br>2. Աշխատանքը ամբողջական է: Առկա են ոչ էական թերություններ: Ընտրված պատկերները և երաժշտությունը ճիշտ են համադրված, ամեն ինչ ճաշակով է արված:***(3 միավոր)***<br>3. Խմբագրման և սրբագրման կարիք չունի, ամբողջությամբ պահպանված են սահմանված տեխնիկական պահանջները: ***(1 միավոր)***<br>*4. Կատարված աշխատանքը ճիշտ և մանրամասն է ներկայացված:* ***(1 միավոր)*** |
| | | | **Ձևը/միջոցը խոսքը, համագործակցությունը/ ինքնուրույնությունը** | 5. Աշխատանքի ներկայացման ձևը/միջոցն ամբողջովին արտացոլում է թեմայի բովանդակությունը: ***(1միավոր)***<br>6. Խոսքը գրագետ է, տրամաբանված : ***(1միավոր)*** |

Նախապատրաստական փուլում աշակերտները ծանոթացել են թեմային, նրա նպատակներին ու խնդիրներին: Կատարվել է աշխատանքի բաժանում և տրվել են հանձնարարականներ: Նախագծային աշխատանքը հետաքրքիր էր նաև նրանով, որ ընդհանուր գործ կատարելիս սովորողներն էլ ավելի մտերմացան, փորձում էին օգտակար լինել իրար, իրարից սովորում էին, գնահատում «ընկերություն» կոչվածը, հասկանում դրա առավելությունները: Մի խոսքով՝ նախագծի վրա աշխատելու ընթացքում առավել ցայտուն դարձան սովորողի ունակությունները: Նախագծային աշխատանքը նպաստել է սովորողների միջև հաղորդակցման մի շարք հմտությունների ձևավորմանը, որոնցից են՝

- հարցնելու կարողությունը (պարզել այլ սովորողների տեսակետները, ուսուցչին հարցում անել՝ պարզելու տեղեկատվությունը),
- ձայնը կառավարելու կարողությունը (հստակ խոսել՝ կարգավորելով ձայնի

տոնայնությունը՝ կախված իրավիճակից, որպեսզի բոլորը կարողանան լսել),

- սեփական տեսակետն արտահայտելու ունակությունը (յուրաքանչյուրի համար պարզ ձևակերպել կարծիքը, հիմնավոր ապացուցել),
- բանակցելու, ընկերական մթնոլորտում ամենաճիշտ, ռացիոնալ, օրիգինալ որոշումը, հիմնավորումը ընտրելու ունակությունը:

Յուրաքանչյուր խումբ անհրաժեշտ ուսումնական նյութ ձեռք բերելու համար օգտվել է տարբեր աղբյուրներից՝ դասագիրք, օժանդակ գրականություն, համացանց. . . Կազմակերպել ենք այցելություն դեպի Եղիշե Չարենցի տուն-թանգարան, ուր աշակերտները հաղորդակից են դարձել չարենցյան կենսակերպին և հետաքրքրությամբ ըմբոշխնել հանճարի բացակա- ներկայությունը:

Ի մի բերելով ձեռք բերածը՝ կատարվել է բազմաբնույթ տեղեկատվական նյութից վերքաղ: Զարգացրել ենք էականը, կարևորը նկատելու, գաղափարների բովանդակության մեջ նշանակալի- անհրաժեշտը առանձնացնելու մտավոր կարողությունը:

Նախագծի կատարումը վերահսկելու համար կազմվել է աշխատանքային ժամանակացույց՝ միջանկյալ արդյունքներով: Նախագծի իրականացման ընթացքում կատարվել են հետազոտական աշխատանքներ, նախագծի արդյունքի ներկայացում, աշխատանքների գնահատում, ստացված արդյունքի համապատասխանություն սկզբնական պահանջներին: Որոշակի դժվարություններ կային ՏՀՏ գործիքներից օգտվելիս, որոնք հաղթահարեցինք համատեղ ջանքերի շնորհիվ:

Հինգշաբաթյա աշխատանքներից հետո աշակերտները պատրաստվել են իրենց կատարած աշխատանքների ներկայացմանը՝ հետազոտական հաշվետվությանը: Բոլոր խմբերն իրենց աշխատանքներն ամբողջացրել և ավարտուն տեսքի էին բերել՝ առաջնորդվելով նախապես քննարկված և մշակված գնահատման սանդղակի չափանիշներով: Քանի որ խմբերի աշխատանքները միևնույն նախագծի իրար լրացնող և ամբողջացնող բաժիններն էին, նպատակահարմար էր դրանք նախապես՝ մինչև ներկայացնելը, միավորել մեկ սահիկաշարում: Յուրաքանչյուր խումբ սահիկաշարում ներկայացնում էր իր առաջադրանքը: Այնուհետև մասնակիցները ներկայացրին իրենց ստեղծած ուսումնական նյութը (պրոդուկտը)՝ «Հայաստանի հավերժության երգը» խորագրով գրքույկը:

Նախագծային աշխատանքն իրականացրած աշակերտները համառոտ նկարագրեցին կատարված աշխատանքը. ինչ խնդիր էին դրել, ինչպիսին է աշխատանքի արդյունքը, որն էր նախագծի արդյունավետությունը, խոսեցին նախագծի ընթացքում ծագած

դժվարությունների, ինչո՞ւ չէ, նաև դյուրությամբ արված աշխատանքի մասին: Կարողացան հիմնավորել՝ աշխատանքի ընթացքում ինչն էին համարում անարդյունավետ, իսկ ինչը՝ օգտակար, կոնկրետ ներկայացնողի համար որքանով էր օգտակար այս նախագծին մասնակցելը, ինչ սովորեց, ինչը ճշտեց, ինչ է կարողանում ավելի լավ անել աշխատանքը կատարելուց հետո, ինչը ինքը կկիրառի հետագայում: Ներկաները հարցեր ուղղեցին նախագծային աշխատանքի մասնակիցներին, և ծավալվեց քննարկում: Քննարկման ընթացքում խմբերը, մասնակիցները առանձնացրին աշխատանքի հաջողված կողմերը, նշեցին, թե ինչը կարելի է բարելավել, և ներկայացրին առաջարկներ: Այնուհետև, օգտվելով գնահատման սանդղակից, խմբերը և ուսուցիչները գնահատեցին ելույթները (սովորողներին և ուսուցիչներին նախապես տրամադրվել էր խմբերի աշխատանքների գնահատման սանդղակը):

## Խմբային աշխատանքների գնահատման սանդղակ

| | Բովանդակություն | Ինքնատիպություն | Մուլտիմեդիայի օգտագործում |
|---|---|---|---|
| **1-3 միավոր** | Ուսումնասիրությունները չեն առնչվում հիմնախնդրին: Բացակայում է նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությունը: Առկա են սխալներ: | Նյութերը ներկայացվում են առանց որոշակի մշակման, սահմանափակ թվով միաբնույթ տեղեկատվական աղբյուրների հիման վրա: | Նյութերում բացակայում են մեդիաաղբյուրներ, մուլտիմեդիոն նյութեր, հղումներ: |
| **4-6 միավոր** | Ուսումնասիրություն-ները մասամբ են առնչվում հիմնա-խնդրին: Նյութի շարադրանքը որոշակիորեն տրամաբանական է, սակայն առանձին հարցեր անհասկանալի են: | Նյութերը ներկայացվում են միօրինակ: Առկա են տեղեկատվական տարբեր աղբյուրներ: | Նյութերում օգտագործված են տեղեկատվության մեկ-երկու աղբյուր՝ հղումներով, մեկ-երկու մուլտիմեդիոն նյութ, որոնց ներկայացումը, սակայն, համակարգված չէ: |
| **7-8 միավոր** | Ուսումնասիրություն-ներն առնչվում են հիմնախնդրին: Նյութի շարադրանքը տրա-մաբանական է, առանձին բաղկացուցիչ մասերը լրացնում են իրար: | Նյութերը բազմազան են, ներկայացվում են հետաքրքիր մոտեցմամբ: Առկա են հեղինակային գաղափարներ: Ներառված է մեծածավալ տեղեկատվություն տարբեր աղբյուրներից: | Նյութերում օգտագործված են մեդիաաղբյուրներ՝ հղումներով, մեդիանյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրանկարներ, նկարներ, տեսանյութեր, ձայնագրություններ: Կիրառված մուլ-տիմեդիոն տարրերը ոչ միշտ են հասկանալի դարձնում հարցերի ընկալումը: |
| **9-10 միավոր** | Ուսումնասիրություն-ները լիարժեք արտացոլում են | Նյութերը բազմազան են, ներկայացվում են յուրօրինակ | Նյութերում օգտագործ ված են մեդիաաղբյուրներ՝ |

| | | | |
|---|---|---|---|
| | հիմնարար հարցերը: Նախագծի բովանդակությունը հասկանալի է, տրամաբանորեն շարադրված, ընկալելի: | մոտեցմամբ: Աշխատանքն աչքի է ընկնում առանձնա-հատուկ գաղափարներով, տեղեկությունները հա-վաքված են տարաբնույթ աղբյուրներից և ստեղծագործաբար վերլուծված են: | հղումներով, մեդիանյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրանկարներ, նկարներ, անիմացիաներ, տեսանյութեր, վիճակագրական տվյալներ, սոցհարցումների ձայնագրություններ: Մուլտիմեդիոն տարրերն ընդգծում են նյութի բովանդակային մասը և հեշտացնում բարդ հարցերի ընկալումը: |
| **Ընդամենը** | | | |

## Խմբային աշխատանքների գնահատման սանդղակ

| | Ներկայացման բանավոր խոսք | Գրաֆիկական ձևավորում | Խմբային աշխատանք |
|---|---|---|---|
| **1-3 միավոր** | Աշխատանքի Արդյունքները ներկայացնում են ոչ հստակ: Խոսքը կցկտուր է, ոչ լիարժեք: | Աշխատանքը ներկայացված է պարզ շարադրանքի տեսքով: Մեծ ուշադրություն է դարձվել ցուցադրական նյութերին, ինչը խանգարում է բովանդակության ընկալմանը: | Խմբում աշխատանքային պարտականություն ները չեն բաշխվել, և որոշ անդամներ ընդհանրապես չեն ընդգրկվել աշխատանքներում: Գործնականում խմբային աշխա-տանք չի իրականացվել: |
| **4-6 միավոր** | Ներկայացնում են աշխատանքի արդյունքները մասամբ: Ներկայացվող նյութին տիրապե-տում են մասամբ: Խոսքը սահուն է, սակայն բացակայում են հիմնավորումները: | Աշխատանքը ներկայացված է շարադրանքի տեսքով,առկա է մեկ-երկու մեդիա-նյութ: Գրաֆիկական և մուլտիմեդիոն բաղադրիչները չեն խանգարում բովան-դակության ընկալմա-նը,բայց ոչ միշտ են ճիշտ իրագործված, անհամաչափ են, չկա ընդհանուր ոճ: | Խմբի անդամների մեծ մասըմասնակցել է աշխատանքներին, բայց ծանրաբեռնվա-ծությունը նրանց միջև անհավասարաչափ է բաշխվել: |
| **7-8 միավոր** | Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները: Թեմայի վերաբերյալ ներկայացնում են լրացուցիչ տեղե-կություններ: Խոսքը սահուն է, համոզիչ,հուզական: | Աշխատանքը ներկայացված է համակարգված, հստակ տեսանելի են հիմնական գաղափար-ներն ու դրույթները: Ձևավորման և բովանդակային տարրերը լրացնում են միմյանց: | Խմբի անդամների մեծ մասն իր ներդրումն ունի ընդհանուր գործում: |
| **9-10 միավոր** | Լիարժեք | Աշխատանքը | Աշխատանքներին հավասարապես մասնակցել |

| | | | |
|---|---|---|---|
| | ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու հիմնական դրույթները: Նյութը ներկայացնում են լիարժեք և բազմակողմանի: Խոսքը սահուն է, համոզիչ, փաստարկված, պատկերավոր և հուզակոնորեն հագեցած: | ներկայացված է համակարգված, մատչելի, և հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Մանկավարժա կան տեսակետից ձևավոր-ման և բովանդակային տարրերը կազմում են մեկ ամբողջություն: | են խմբի բոլոր անդամները: |
| **Ընդամենը** | | | |

Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն է, այլ նաև գիտակից քաղաքացի ձևավորելը, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Եթե ցանկանում ենք, որ մեր սովորողները հասնեն ուսումնառության ավելի արդյունավետ մակարդակների, քայլեն նոր ժամանակներին զուգընթաց, ապա դասավանդողներս պետք է սովորենք և կիրառենք դասավանդման ավելի հզոր միջոցներ:

Կատարելով հետազոտական աշխատանք՝ փաստեցի, որ նախագծային աշխատանքը, նախագծային ուսուցումն ուսումնական ճամփորդություն է և արդյունավետորեն նպաստում է՝

- ուսումնական նյութի, բովանդակության բազմակողմանի, առավել խոր յուրացմանը,
- սովորողի կարողունակությունների բացահայտմանը,
- սովորողի կարողությունների և հմտությունների ձևավորմանը,
- ստեղծագործական ունակությունների ձևավորմանը,
- անհատական, սեփական կարողությունների վերհանմանը,
- ինքնագնահատականի բարձրացմանը,
- վերլուծական, քննադատական մտածողության ձևավորմանը,
- մարդկային, անձնային որակների բացահայտմանը,
- միմյանց նկատմամբ փոխադարձ վստահության ստեղծմանը. . .

Այսպիսով, ուսումնական նախագծային աշխատանքի շնորհիվ սովորողները ձեռք են բերում գիտելիքներ, հմտություններ, կարողունակություններ, ձևավորում են արժեքներ և դիրքորոշումներ, որոնք կյանքում, նոր իրավիճակներում իրենց օգնելու են դիմակայել ժամանակի մարտահրավերներին:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


- Մերի Հովհաննիսյան «Նախագծային ուսուցման առանձնահատկությունները»
- Մարիա Ստուպնիցկայա «Նախագիծը՝ ուսուցման մեթոդ»
- К. В. Петров, С.В. Савочкина
  ИСПОЛЬЗОВАНИЕ МЕТОД А ПРОЕКТОВ В СОВРЕМЕННОЙ ШКОЛЕ
- Е.Л. Касьяник МЕТОД ПРОЕКТОВ: ОТ ТЕОРИИ К ПРАКТИКЕЕ.
- А. Смирнова. Метод проектов - один из ведущих методов обучения в условиях реализации ФГОС. Видеуроки. Дата обращения: 30 июля 2023.
- Т.И. Коверзенева. Метод проектов как средство формирования ключевых компетентностей обучающихся. Образовательный портал. Дата обращения: 30 июля 2023.
- Метод проектов и его характеристика. Дата обращения: 30 июля 2023. Новые педагогические и информационные технологии в системе образования: Учебное пособие / Е. С. Полат , М. Ю. Бухаркина, М. В. Моисеева, А. Е. Петров; под ред. Е. С. Полат . — М.: Издательский центр «Академия», 1999—2005